

<b>Համարը</b> N 419 <b>Տիպը</b> Որոշում <b>Սկզբնաղբյուրը</b> ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել <b>Ընդունող մարմինը</b> ԼՂՀ կառավարություն <b>Ստորագրող մարմինը</b> ԼՂՀ Վարչապետ <b>Վավերացնող մարմինը</b> <b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 16.11.2004	<b>Տեսակը</b> Մայր <b>Կարգավիճակը</b> Գործում է <b>Ընդունման վայրը</b> Ստեփանակերտ <b>Ընդունման ամսաթիվը</b> 16.11.2004 <b>Ստորագրման ամսաթիվը</b> 16.11.2004 <b>Վավերացման ամսաթիվը</b> <b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>
--	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵԿՈՆՈԳԻԱԿԱՆ ԹՈՂՔԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀԱՄԱՐ ԶՐԻ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՎԵՐՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 419

ք.Ստեփանակերտ

### ԹՈՂՔԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀԱՄԱՐ ԶՐԻ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՎԵՐՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

Հաստատել **Էկոլոգիական** թողքերի և մակերևութային հոսքի հատվածում յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար ջրի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների որոշման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐՉԱՊԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի "16"-ի  
թիվ 419 որոշման

### Կ Ա Ր Գ

### ԹՈՂՔԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՀՈՍՔԻ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ՀԱՄԱՐ ԶՐԻ ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ՎԵՐՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է թողքերի և մակերևութային հոսքի հատվածում յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար ջրօգտագործման նպատակով ջրի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների որոշման կարգը:

2. Մակերևութային հոսքի հատվածում յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար **Էկոլոգիական** թողքի չափը հաշվարկվում է յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար բազմամյա դիտարկումների 95 տոկոս ապահովվածության նվազագույն ելքի 75 տոկոսի չափով:

3. **Էկոլոգիական** թողքերի հաշվարկման համար սույն կարգի 2-րդ կետում նշված եղանակով սահմանված չափերը կիրառելի են մինչև ջրի ազգային ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար ջրի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների սահմանումը:

ԼՂՀ կառավարության աշխատակա  
զմի  
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան